



ԱԿԱՑԻԱ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

Ակացիայի օգտակար հատկությունները



Ակացիան (աքասիա) ու միմոզան ակացիաների ընտանիքի բույսեր են: Իրականում միայն միմոզան կարող է ակացիայի գիտական անվանմանը հավակնել, որովհետև ի սկզբանե ակացիան բուլղորովին այլ բան է նշանակել: Միմոզան Ավստրալիայից Եվրոպա է բերվել 19-րդ դարում:

Ընդհանրական ակացիան բակլազգիների ընտանիքի թիթեռնածաղկավորների ենթաընտանիքի՝ Հյուսիսային Ամերիկայում տարածված ոչ մեծ ցեղատեսակի կարծր փայտանյութ գոյացնող ու մինչև 20 մետր բարձրության հասնող փշոտ ծառ է, որն ունենում է սպիտակ, վարդագույն, կամ դեղին ծաղիկներ: Ֆրանսիացիները Հյուսիսային Ամերիկայից բերված այս ծառատեսակին, ի պատիվ այն Ֆրանսիայում տարածած արքունական այգեպան ու բուսաբան Ժան Ռոբենի, անունն են տվել: Իսկ ակացիա եզրույթը լատինական ծագում ունի: Հայտնի է մոտ 750 տեսակ: ՀՀ-ում գրեթե ամենուր աճում է ակացիա սպիտակ (*Robinia pseudoacacia*) կամ ակացիա կեղծ տեսակը:

Ակացիան (ակակի, կակիա) խոշոր, գեղազարդիչ ծառ է (բարձր. 25-30 մ), լայն գլանաձև սաղարթով: Տերևները բարդ, կրկնակի փետրաձև են: Ծաղիկները սպիտակ են կամ դեղնավուն, հոտավետ՝ հավաքված ողկույզաձև ծաղկաբույլերում: Պտուղը մանր սերմերով ունդ է: Ծաղկում է մայիս-հուլիսին: Արմատների վրա կան ազոտային միացությունները կուտակող պալարներ: Մեղրատու է: Դեղաբույս է, պարունակում է A և C վիտամիններ, էթերայուղեր, խեժ, աղանյութեր, ներկանյութեր: Չոր և ցրտադմացկուն է: Օգտագործվում է կանաչապատման և անտառաբարելավող տնկարկների ստեղծման համար, ամուր և արժեքավոր բնափայտը՝ կահույքագործության մեջ: Ակացիան արագ աճող, երաշտին և սառնամանիքներին դիմացող, լուսասեր բույս է, հեշտությամբ աճում է աղակալած հողերի վրա, կարող է կազմել քամուց և հողերի հոսունությունից պաշտպանող ստվար պատնեշաշերտեր: Բնության մեջ մշակման դեպքում հարկավոր է հաշվի առնել, որ հնարավոր է՝ արմատները թունավոր նյութեր

արտադրեն: Սպիտակ ակացիան շատ լավ է հարմարվում ժամանակակից քաղաքների պայմաններին, սաղարթը հեշտությամբ կարելի է ձևավորել: Հայտնի են ակացիայի մոտ երկու տասնյակ տեսակներ, դրանք տարբերվում են սաղարթի



կառուցվածքով, տերևների գույնով և դիրքով, փշերի առկայությամբ կամ բացակայությամբ, ծաղիկների գունային երանգներով, ծաղկման տևողությամբ: Ունի բազմաթիվ պարտեզային ձևեր, որոնք միմյանցից տարբերվում են սաղարթի ձևով (բրգաձև, կլորավուն, ձվաձև բրգաձև, լայն գնդաձև, նուսր գնդաձև), տերևների ձևով, գույնով, փշերի առկայությամբ (անփուշ, տերևների վրա սպիտակ շերտիկներով, բացվելիս ոսկեկանաչ կամ ծիրանագույն, ոսկեդեղին երիզով, նեղ երկարավուն տերևիկներով և այլն), ծաղիկների գույնով և ծաղկման տևողությամբ (բաց վարդագույն, ծաղկում է ամբողջ ամռան ընթացքում): Հայաստանում առանձնապես շատ է տարածված ռոբինիա կեղծակացիայի գնդաձև այլատեսակը, որն օգտագործվում է հատկապես փողոցների և ծառուղային տնկարկներում: Ստերիլ է, չի

ծաղկում: Մեր հանրապետությունում լայնորեն տարածված ծառատեսակներից է հանդիպում է ամենուրեք, ստորինից մինչև բարձրլեռնային գոտի: Մշակվում է ինչպես դեկորատիվ նպատակներով, այնպես էլ անտառկուլտուրաներում և անտառաբերականությամբ, հակաէրոզիոն հողապաշտպան տնկարկներում:



Սպիտակ ակացիա



Սպիտակ ակացիան (*Robinia pseudoacacia*) ծառ է, պատկանում է ընդավորների ընտանիքին, ունի 25-30 մետր բարձրություն, սփռվող սաղարթ, հաստ,

մուգ և խորը ակոսավոր կեղև: Սպիտակ ակացիայի արմատային համակարգը շատ հզոր է: Նրա արմատային համակարգը շատ հզոր է; Նրա արմատները խորանում են մինչև 20 մետր և ավելի; Տերևները կենտ փետրավոր են, կարճ կոթուններով, որոնք ճյուղերի ուղղությամբ փոխակերպվում են աճառանման կեղծ բունոցների և կազմված են 4-8 զույգ էլիպսաձև, բաց կանաչ, փափուկ, ամբողջաեզր տերևիկներից: Փշերը (ձևափոխված տերևներ) ամուր են, փայտաձև, շատ սուր ծայրերով, մանգաղանման: Ծաղիկները բազմաթիվ են, բուրուճնավետ, սպիտակ, խոշոր, կախվող ողկույզներով: Պտուղը՝ տափակ ունդ է՝ մինչև 10 սմ երկարության մուգ գույնի սերմերով:

Ծաղիկները պարունակում են բույսին բնորոշ գլյուկոզիդներ, սալիցիլաթթու, տանիններ: Տերևները՝ ֆլավոններ, զգալի քանակությամբ կարոտին և վիտամին C, գլյուկոզիդներ: Տերևները և մատղաշ ցողունները օգտագործվում են որպես անասնակեր, հատկապես օգտակար են ճագարների համար: Տերևներից ստանում են կանաչ ներկանյութ: Կեղևը պարունակում է գլյուկոզիդ ռոբինին, տանին, ճարպային յուղ, ֆիտոստերին, կաշվեգործության մեջ օգտագործվող դաբաղանյութ: Պտուղները հարուստ են ճարպայուղով: Բույսի բոլոր մասերում պարունակվում են պեկտին և լորձանյութ:

Սպիտակ ակացիան ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտուղները հասունանում են սեպտեմբերին և ծառի վրա մնում են կախված ողջ ձմռան ընթացքում: Այս ծառը կյանքի տևողությունը 50 տարի և ավելի է: Աճում է ճանապարհների երկայնքով, այգիներում և պուրակներում:

Թունավոր են սպիտակ ակացիայի սերմերը, կեղևը և արմատները:

Հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է, որտեղ հանդիպում է հյուսիսարևմտյան և հյուսիսային նահանգներում: 1804թ. առաջին անգամ այս բույսի սերմերը բերվել են Ռուսաստան, Իսկ 1813թ. հայտնվել են Ղրիմի Նիկիտինյան բուսաբանական այգում:

Հումքի հավաքումը և չորացումը

Դեղագործական հումք են սպիտակ ակացիայի ծաղիկները, որոնք հավաքում են ծաղկման սկզբին կիսաբացված վիճակում: Չորացնում են ստվերում՝ ծածկի տակ, լավ օդափոխվող տարածքում, կամ էլ չորանոցներում՝ 40-50 աստիճան ջերմության պայմաններում: Չորացվող հումքը պետք է ցրված լինի բարակ շերտով և հաճախ շրջվի: Կեղևը և տերևները հավաքում են ամբողջ աճի (վեգետացիայի) շրջանում:



Կիրառումը բժշկության մեջ

Երիտասարդ ծառերի կեղևի եփուկը ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է գաստրիտների սրացման և խոցային հիվանդության ժամանակ, իսկ սպիրտային թուրմը՝ ստամոքսային թթվայնության բարձրացման և ստամոքսի այլ հիվանդությունների դեպքում: Տերևների, երիտասարդ ընձյուղների թուրմն օգտագործվում է գաստրիտների սրացման և ստամոքսի ու տասներկուամատնյա աղիքի խոցերի ժամանակ: Ծաղիկների եփուկը ժողովրդական բժշկությունում արդյունավետ են համարում երիկամների և միզապարկի հիվանդությունների ժամանակ, թուրմը՝ ռևմատիզմի ժամանակ:

Սպիտակ ակացիայի ծաղիկներն օգտագործում են խառնուրդի ձևով՝ սովորական արջախաղողի տերևների, սովորական տարկավանի ծաղիկների, կապույտ տերեփուկի ծաղիկների, մատուտակի արմատների հետ որպես միզամուղ հավաքածու: Թուրմն օգտագործում են որպես խորխաբեր և ջերմիջեցնող միջոց:

Քիմիական բաղադրությունը



Սպիտակ ակացիայի ծաղիկները և կեղևը պարունակում են ռոբինին: Չորացրած Ծաղկաթերթիկներում ռոբինինի քանակությունը կազմում է 3,6 տոկոս: Ռոբինինի ամենամեծ քանակությունը ծաղկման այն շրջանում է, երբ ծաղկակոկոնները ուռած են, բայց դեռ բացված չեն: Ծաղիկների բացվելուց հետո

ռոբինինի քանակությունը նվազում է մինչև 1-1,5 տոկոս: Ծաղիկների մեջ հայտնաբերված են նաև ակացին, բիկրոբին, բիկվերցիտին, եթերայուղ; Եթերայուղը բաց դեղնավուն կիսահեղուկ զանգված է, որը ունի ակացիայի ծաղիկների հաճելի բուրմունք և պարունակում է անտրանիլաթթվի մեթիլային եթեր, ինդոլ, գելիոտրոպին, լինալոլ, տերպինոլ:

Բնափայտը պարունակում է ֆլավոնոիդներ՝ ռոբինետին, դիհիդրոռոբինետին, ֆիզետին, ռոբոտին, ռոբոտեին, բուտեին, լիկվարտիգենին և այլն: Տերևներում հայտնաբերված են գլիկոզիդներ՝ ինդիկան և սիրինգին, վիտամին Ա, ասկորբինաթթու (վիտամին C), ֆլավոնոիդներ և դաբաղիչ նյութեր:

Դեղաձևերը, օգտագործման մեթոդները և չափաբաժինները



Սպիտակ ակացիայի կեղևի եփուկը:

1/2 ճաշի գդալ մանրացված հումքի վրա ավելացնում են 500 մլ ջուր, եռացնում 20 րոպե, քամում տաք վիճակում և եռացրած ջրով ծավալն ավելացնում մինչև նախկին մակարդակը (500 մլ): Օգտագործում են փոքր բաժիններով 2 օրվա ընթացքում:

Եթե եփուկի ընդունումն օրգանիզմն լավ է տանում, կարելի է խմել օրվա ընթացքում ,ցանկալ է գոլ վիճակում:

Ակացիայի ծաղիկների եփուկը: 1 ճախի գդալ թարմ կամ չորացած հումքի վրա ավելացնում են 500մլ ջուր, եռացնում 3 րոպե, քամում:

Ակացիայի ծաղիկների թուրմ: Հումքին ավելացնում են սպիրտ կամ օղի և թրմում 2 շաբաթ արևի տակ:

10գ հումքի վրա ավելացնում են 200մլ եռման ջուր, թրմում, ապա քամում:

Տերևների և երիտասարդ ընձյուղների թուրմ: Հումքը թրմում են 40 տոկոսանոց սպիրտի մեջ 1:10 հարաբերությամբ՝ 15 օր պարբերաբար խառնելով: Օգտագործում են 1 թեյի գդալ ուտելուց առաջ օրը 3 անգամ:

Հակացուցումները և հնարավոր կողմնակի ազդեցությունները

Դեղաձևերի ներքին օգտագործման դեպքում (սերմեր, կեղև, արմատներ) պետք է պահպանել զգուշություն՝ նկատի ունենալով նրանց թունավոր լինելը: Սուր թունավորումներն ուղեկցվում են թուլությամբ, սրտխառնոցով, փսխումով, գլխացավով կամ քնկոտությամբ, վատ ինքնազգացողությամբ: Նման երևույթներ կարող են լինել նաև բնափայտի մշակման ժամանակ:

Օգտագործումն այլ բնագավառներում



Օգտագործում են սննդի, լաքերի, ներկերի արդյունաբերությունում և պարֆյումերիայում: Տերևները կեր են տնային կենդանիների համար: Տերևներից ստանում են երկնագույն ներկ, ծաղիկներից՝ եթերային յուղեր: Սերմերը

պարունակում են մինչև 12 % յուղ և օգտագործվում են որպես սուրճի սուռոգատ: Կեղևը օգտագործվում է կոշտ գործվածք և տարաներ պատրաստելու համար, պարունակում է 2—7 % դաբաղանյութեր, որոնք կաշվին դեղին գույն են տալիս:

Սպիտակ ակացիայի բնափայտից պատրաստված մանրահատակն իր որակով չի զիջում կաղնու փայտից պատրաստված մանրահատակին: լայնորեն օգտագործվում է այգիներում և պուրակներում որպես դեկորատիվ և բուրավետ բույս: Սպիտակ ակացիան պիտանի է ավերի, կիրճերի, գառիվայրերի ամրացման, դաշտապաշտպան շերտերի համար:

Հիանալի մեղրատու բույս է:

Ակացիայի սպիտակ ծաղիկներով մուրաբա



ավելացնել մեկ պտղունց լիմոնի աղ: Կրակի վրայից վերցնել և թափահարել, որ փրփուրը հավաքվի մեջտեղում, իսկ հետո հեռացնել այն: Սառեցնել և լցնել քանկաները:

Անհրաժեշտ բաղադրիչները՝
60 գ սպիտակ ծաղիկներին 1 կգ շաքարավազ և 1թեյի գդալ կիտրոնաթթու:

Թերթիկները կես լիտր եռացող ջրի մեջ եփել 10 րոպե, ավելացնել շաքարավազը և եփել մինչև պատրաստ լինելը, վերջում

Դեղին ակացիա և դրանից ստացված մեղր



անջատում 3-4 օր: Մեկ ծաղկի նեկտարի մեջ շաքարի քանակը հասնում է մինչև 2 մգ:

Դեղին ակացիան (*Caragana arborescens* L.) մեղրատու դեկորատիվ թուփ է մինչև 5մ բարձրությամբ: Ծաղիկները դեղին են, երկար ծաղկակոթերով և տեղադրված են կամ մեկական, կամ փնջերով (2-4 հատ): Դեղին ակացիայից մեղուները նեկտար և ծաղկափոշի են հավաքում: Ծաղիկներում ամենաշատ նեկտար լինում է առավոտյան ժամերին: Ծաղիկները նեկտար են

Ուժեղ մեղվաբնույթի մեկ ծառերից կարող է հավաքել մոտ 8 կգ մեղր: Ակացիայի ծաղիկներից ստեղծված մեղրը շատ բաց է, թափանցիկ, ունի նուրբ համ, առանց որևէ սուր հոտի, բյուրեղանում է շատ դանդաղ: Մեկ հետարի ծառերից մեղուները հավաքում են մինչև 250 կգ մեղր: Ուկրաինայում սպիտակ ակացիայի 1 հա-ից ստացվում է 600-800 կգ մեղր:

Ակացիայի մեղրը ունի շատ օգտակար հատկություններ: Առաջին հերթին այն շատ սննդարար է, քանի որ պարունակում է 40 տոկոս ֆրուկտոզա և 36 տոկոս գլյուկոզա: Այնուհի հանգստացնող և թուլացնող ազդեցություն: Ակացիայի մեղրը խորհուրդ է տրվում անքնությամբ տառապողներին և մեծ աղդեցություն է թողնում նյարդային համակարգի վրա: Ժողովրդական բժշկության մեջ ակացիայի մեղրը օգտագործում են լյարդի հիվանդությունների ժամանակ, այն օգտակար է նաև շաքարախտով հիվանդներին: Աչքի հիվանդությունների դեպքում, ինչպիսիք են գլաուկոման, կատարակտը, օգտագործում են ակացիայի մեղր: Այն նոսրացնում են թորած ջրով և կաթեցնում աչքերի մեջ քնելուց առաջ: Բացի այդ, հայտնի է որ այն ունի հականեխիչ ազդեցություն: Ակացիայի մեղրը լավացնում է նյութափոխանակությունը, այդ պատճառով էլ այն խորհուրդ է տրվում լեղապարկի, լեղուղիների և աղեստամոքսային տրակտի հիվանդությունների դեպքում: Ակացիայի մեղրն օգտագործում են նաև գիշերային անմիզապահության ժամանակ: Այն չի առաջացնում ալերգիկ ռեակցիաներ, դրա համար էլ ակացիայի մեղր կարող են օգտագործել շատերը:

